




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1831

Պրոֆեսորների քաղաքական կարգադրություն

Վ. Ի. Լեւոն

ՎՈՍԿՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ԱՅԺՄ ՈՒ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԼԻԱԿԱՏԱՐ
ՀԱՅԹԱՆԱԿԻՑ ՀԵՏՈ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

3K23

П-50

ԿՈՐԾԱԿՑԱԿԱՆ ՀՐԾՑԹՎԱԳՆՈՒԹՅՈՒՆ

ՅՐԾՎԱՆ

1982

Հ. 2000

3K23
n-50

309 MAY 2005
NOV 2009

Պրոկտուրները ընտրվել են ըստ միացման

14 NOV 2008

Վ. Բ. ԼԵՆԻՆ

ՎՈՍԿՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ԱՅԺՄ ՈՒ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԼԻԱԿԱՏԱՐ
ՀԱՂԹԱՆԱԿԻՑ ՀԵՏՈ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



40102005

1932

8666406

11 SEP. 2013

1837



59239-66

ՊՈՍՎՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՅԺՄ ՈՒ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ
ԼԻԱԿԱՏԱՐ ՀԱՂԹԱՆԱԿԻՑ ՀՅՏՈ

Մեծ հեղափոխության տարեգարձը տոնելու լավագույն յեղանակը նրա չլուծված խնդիրների վրա ուշադրություն կենտրոնացնելն է: Հեղափոխության այսպիսի տոնումը հատկապես տեղին ու անհրաժեշտ է այն դեպքում, յերբ կան արմատական խնդիրներ, վոր դեռ չի լուծել հեղափոխությունը, յերբ պահանջվում է մի ինչ-վոր նոր բան յուրացնել (նոր հեղափոխության մինչև այժմ կատարածի տեսակետից) այս խնդիրները լուծելու համար:

Նորը մեր հեղափոխության համար ներկա մոմենտում այն է, վոր անհրաժեշտ է տնտեսական շինարարության արմատական խնդիրներում դիմել գործողությունների «ոեֆորմիստական», աստիճանական, զգույշ թիկունք անցնելու մեթոդին: Այս «նորությունը» առաջ է բերում մի շարք թեթերիական, թե՛ գործնական հարցեր, յերկբայություններ, կասկածներ:

Թերիական հարց. մի շարք ամենահեղափոխական գործողություններից հետո կատարված անցումն ի՞նչպես պետք է բացատրել ու համաձայնեցնել այն չափազանց «ոեֆորմիստական» գործողությունների հետ, վոր արվում են հենց նույն ասպարեղում, այն դեպքում, յերբ ամբողջ հեղափոխությունն ընդհանրապես հաղթականորեն առաջ է ընթանում: Արդյոք «դիրքերի հանձնում», «անանկության խոստովանություն» կամ նման բան չկա՞ այստեղ: Թշնամիներն, իհարկե, առում են, վոր կա—կիսաֆեոդալական տիպի հետադիմականներից սկսած ու վերջացրած մենչևիկներով կամ 11½ ինտերնացիոնալի այլ ասպետներով: Հենց որա համար էլ թըլ-

նամի յեն նրանք, վոր նման Հայտարարություններ բղավեն ամեն առիթով և առանց վորեւե առիթի: Այս Հարցում բոլոր կուսակցությունները—Ֆեոդալներէից սկսած մինչև մենչևիկները— ցուցադրած սրտաշարժ համերաշխությունը մի ավելորդ անգամ ասպնդուցում է միայն, վոր բոլոր այս կուսակցություններն իրոք «մեկ ռեակցիոն մասսա» յեն հանդիսանում ընդդէմ պրոլետարական հեղափոխության (փակագծում ասենք, ինչպես այս կանխատեսում եր Ենգելսը 1875 ու 1884 թվերին՝ Բեքելին ուղղած իր նամակներում)*):

*) Լենինն այստեղ նկատի ունի Ֆր. Ենգելսի հետևյալ նամակները Ա. Բեքելին.—

1) 1875 թ. մարտի 28-ի նամակը, վոր առաջին անգամ հրատարակված է Ա. Բեքելի կողմից 1911 թ. նրա մեմուարներում «Aus meinem Zeben» («Իմ կյանքից»), վորտեղ Ենգելսը, ըննադատության յենթարկելով Գոթայի ծրագրերը, ասում է—«Ամենից առաջ ծրագրի նախագիծն ընդունում է հետևյալ վերամբարձրաց պատմականորեն սխալ լատտույան ֆուազը.—«Բանվոր դասակարգի վերաբերմամբ բոլոր մյուս դասակարգերը կազմում են մի հոծ ռեակցիոն մասսա»... Այս դրույթը ճիշտ է միայն առանձին բացառիկ դեպքերում, որինակի համար, Կոմունայի նման պրոլետարական հեղափոխության ժամանակ, կամ այնպիսի յերկրում, վորտեղ վաղ միայն բուրժուազիան և ստեղծել պետություն ու հասարակություն ըստ իր պատկերի ու նմանության, այլև նրանից հետո դեմոկրատական մանր բուրժուազիան անց է կացրել այդ վերակազմությունը մինչև նրա ծայրահեղ սրամաքանական հետևությունները»...

А. Бебель, «Из моей жизни» («Мемуары»). Том II, ч. 2. Перевод под редакцией Д. Ризанова. Изд. Петроградск. Совета, 1919, стр. 119—120:

2) 1884 թ. դեկտեմբերի 11-ի նամակը, վորն առաջին անգամ հրատարակված է այս դրում՝ Engels, Friedrich—«Politisches Vermächtnis». Aus unveröffentlichten Briefen. Mit einem Bild. (Berlin. Jugendinternationale. Verl. Junge Garde. [1920]. S. 30. Internationale Jugendbibliothek № 12). (Ֆր. Ենգելս—«Քաղաքական կտակ». Բեռլին, 1920 թ., «Յերիտասարդության Միջազգային գրադարան» № 12), վորտեղ Ենգելսը, խոսելով արդյունաբերական հեղափոխության մասին Գերմանիայում, գրում է.— «Նրան (զուտ դեմոկրատիային) չի խանդարի հեղափոխության մոմենտին կարճ ժամանակով ձեռք բերել ժամանակավոր նշանակություն... ամ-

Սակայն վորոշ... «յերկրայություն» կա բարեկամներին մեջ ել:

Վերականգնենք խոշոր արդյունաբերությունը և կարգի բերենք սրա անմիջական արդյունափոխանակությունը մանր գյուղացիական հողագործություն հետ՝ ոժանդակելով սրա հանրայնացմանը: Խոշոր արդյունաբերությունը վերականգնելու համար պարտք վերցնենք գյուղացիներից պարենի ու ու հում նյութի վորոշ քանակ, մասնատման միջոցով: Ահա, թե ինչ պլան (կամ մեթոդ, սխտեմ) էյինք իրադրծում մենք յերեք տարուց ավելի, մինչև 1921 թվի դարունը: Խնդրի հեղափոխական մերձեցում եր այս, վորի նպատակն եր հնի ուղղակի ու լիակատար լեկումը՝ նոր հասարակական տնտեսական կերտվածքով փոխարինելու համար:

1921 թվականի դարնանից սկսած՝ մենք դործողություններ յայս մերձեցման պլանի, մեթոդի, սխտեմի տեղը դնում ենք (դեռ չենք «դրել» այլ դեռ չարունակ «դնում ենք» միայն և այս լիովին չենք դիտակցել) մի բոլորովին այլ, ռեֆորմիստական տիպի բան. չխորտակել հին հասարակական տնտեսական կերտվածքը, առևտուրը, մանր տնտեսությունը, մանր ձևոնարկողությունը, կապիտալիզմը, այլ կենդանաց-

բողջ բուրժուական և նույնիսկ ֆեոդալական տնտեսության վերջին փրկության խաբիսի դերում: Ճիշտ այդպես ել 1848 թ. ամբողջ Ֆրանսիական-բրյուսիտական մասսան մարտից մինչև սեպտեմբեր անաղաճում եր լիբերալներին, վորպեսզի հեղափոխական մասսաները հնազանդություն մեջ պահեն... Համենայն դեպս, կրկին ժամանակ է նրանից հետո հետևյալ որը մեր միակ հակառակորդը կհանդիսանա այն ամբողջ ռեակցիոն մասսան, վոր համախմբում է զուտ դեմոկրատիայի շուրջը, և այդ, ինչպես յես կարծում եմ, վաղ մի կերպ չի կարելի աչքաթող անել: (Մեջբերված է Լենինի կողմից «Ռ. Կ. Կ. տակտիկայի մասին» ղեկուցման թեզիսների մեջ «Կոմիստերնի III Կոնգրեսում», տես՝ Յերկեր XXVI հատոր էջ 620: Լրիվ նամակը տես՝ Կ. Маркс и Фр. Энгельс.—«Письма», изд. 3-е, переработанное, под редакцией и с при- мечаниями В. В. Адоратского Գրքում):

նել առևտուրը, մանր ձեռնարկողությունը, կապիտալիզմը, զգուշորեն ու աստիճանաբար տիրելով նրանց կամ հնարավորություն ստանալով նրանց պետական կարգավորման յենթարկելու՝ նրանց կենդանացման չափով միայն:

Խնդրի միանշանակաբար այլ մերձեցում է այս:

Նախկին հեղափոխական մերձեցման համեմատությամբ ռեֆորմիստական մերձեցում է այս (հեղափոխությունը մի այնպիսի վերակազմություն է, վոր խորտակում է հինը ամենափոփոխականում ու արմատականում և վոչ թե այն վերաշինում է զգուշությամբ, դանդաղորեն, աստիճանաբար՝ աշխատելով խորտակել վորքան կարելի յե զի):

Հարց է առաջ գալիս, յեթե հեղափոխական յեղանակները փորձելով դուք խոստովանել եք նրանց անհաջողությունը և անցել ռեֆորմիստական յեղանակներին, ապա այս չի՞ ապացուցում արդյոք, վոր դուք հեղափոխությունն ընդհանրապես սխալ եք հայտարարում: Արդյոք, այս չի՞ ապացուցում, վոր պետք չէր ընդհանրապես հեղափոխությունից սկսել, այլ հարկաւոր եր սկսել ռեֆորմներից ու սահմանափակել ռեֆորմներով:

Այսպիսի յեղրակացություններ անում են մենչեիկներն ու նրանց նմանները: Սակայն այս յեղրակացությունը կամ սովորություն է ու պարզ նենգաբարություն նրանց կողմից, վորոնք քաղաքականության մեջ անցել են «կրակի ու ջրի միջից», կամ յերեխայություն է նրանց կողմից, ով «չի անցել» այս փորձությունը: Իսկական հեղափոխականի համար ամենամեծ վտանգը, թերևս նույնիսկ միակ վտանգը, հեղափոխականությունը չափազանցելն է, հեղափոխական հնարները տեղին ու հաջողությամբ կիրառելու սահմաններն ու սլաքամները մոռանալն է: Իսկական հեղափոխականներն այս կետում ամենից ավելի եյին կոտրում իրենց վիզը, յերբ սկսում եյին «հեղափոխություն» բառը գրել մեծատառով, «հեղափոխությունը» դարձնել ինչ-վոր համարյա աստվածային բան, կորցնել զուլսը, կորցնել ընդունակությունը՝

ամենաստանարյուն ու զղատու կերպով կշռադատելու, ծանր ու թեթև անելու, ստուգելու, թե վո՞ր մոմենտում, ի՞նչ հանգամանքներում, գործողության վո՞ր աստիճանում պետք է հեղափոխականորեն գործել իմանալ և վո՞ր մոմենտում, ի՞նչ հանգամանքներում ու գործողության վո՞ր աստիճանում պետք է ռեֆորմիստական գործողության անցնել կարողանալ: Իսկական հեղափոխականները կկործանվեն (վոչ թե արտաքին պարտության իմաստով, այլ նրանց գործի ներքին տապալման իմաստով) միայն այն դեպքում, — քայց կկործանվեն հաստատապես այն դեպքում, — յերբ կկորցնեն զգաճությունը և կկարծեն, վոր իբրև թե «մեծ, հաղթական, համաշխարհային» հեղափոխությունը կարող է և պետք է հեղափոխականորեն լուծի անսպասան լսուր ու ամեն տեսակի խնդիրները բոլոր հանգամանքներում, գործողության բոլոր աստիճաններում:

Ով այսպիսի բան «կմտածի», նա կորած է, վորովհետև նա իր զլխից հնարել է մի հիմարություն արմատական հարցում, իսկ կատաղի պատերազմի ժամանակ (հեղափոխությունն ամենակատաղի պատերազմ է) հիմարության սլատիթը լինում է պարտություն:

Վո՞րտեղից է հետևում, թե «մեծ, հաղթական, համաշխարհային» հեղափոխությունը կարող է և պետք է միայն հեղափոխական միջոցներ կիրառի: Վոչ մի տեղից չի հետևում այս: Յեւթ այս ուղղակի ու անսպասան սխալ է: Սրա սխալ լինելն ինքնաթիւքայն պարզ է զուտ թեորիական դրությունների հիման վրա, յեթե չհեռանանք մարքսիզմի հողից: Սրա սխալ լինելը հաստատվում է մեր հեղափոխության փորձով եյ: Թեորիապես. հեղափոխության ժամանակ հիմարություններ կատարվում են, ինչպես և ամեն մի ուրիշ ժամանակ, — ասում եր Ենգելս*), — և միշտ եր ասում: Պետք է աշ-

*) Լենինը նկատի ունի այստեղ Ենգելսի հետևյալ խոսքերը. — «Ամեն մի հեղափոխության ժամանակ անխուսափելիորեն կատարվում են

խատել քիչ սխալներ անել և արածներն ել շուտով ուղղել՝ վորքան կարելի յե ավելի զգաստ հաշիւ առնելով, թե մի ր խնդիրները և յե՛րբ կարելի յե հեղափոխական միջոցներով լուծել և վորոնք չի կարելի: Մեր սեփական փորձը. Բրեստի հաշտությունը տիպար եր մի գործողության, վորն ամենեւին հեղափոխական չեր, այլ ռեֆորմիստական եր կամ նույնիսկ ավելի վատ եր, քան ռեֆորմիստականը, վորովհետեւ այս գործողությունը հետագայ՝ գործողություն եր, այնինչ ռեֆորմիստական գործողություններն, ընդհանուր կանոնի համաձայն, դանդաղորեն, զգուշությամբ, աստիճանաբար առաջ են գնում և մոլ թե հետ-հետ գնում: Բրեստի հաշտությունը կնքելու ժամանակ մեր տակտիկայի ուղիղ լինելն այժմ այնքան և ապացուցված, այնքան պարզ և բոլորին ու ամենեւից ընդունված, վոր չարժե այլևս խոսքեր վատնել այս թեորիայի մասին:

Մեր հեղափոխության բուրժուական-դեմոկրատական աշխատանքն և միայն լիովին կատարված, ավարտված: Յեվ մենք ամենաորինական իրավունքն ունենք սրանով հպարտանալու: Մեր հեղափոխության պրոլետարական կամ սոցիալիստական աշխատանքը հանդուժ և յերեք գլխավոր տեսակների. 1) Համաշխարհային իմպերիալիստական պատերազմից հեղափոխականորեն դուրս գալը, կապիտալիստական դիշտիչների յերկու համաշխարհային խմբակների դիմակազեր-

շատ հիմարություններ, ինչպես և ամեն մի այլ ժամանակ, և յերբ, վերջապես, մարդիկ հանգստանում են այնքան, վորպեսզի քննադատաբար վերաբերվեն դեպի դեպքերը, ապա անհրաժեշտաբար գալիս են հետևյալ յեղբայրացության. — մենք շատ այնպիսի բաներ ենք արել, վոր ամբողջով կլինեք չանել, և չենք արել շատ այնպիսի բաներ, վոր ամբողջով չենք արել: (Программа коммунаров-бланкистов) (Հիմունար-բլանկիստների ծրագրերը)». առաջին անգամ տպված և «V o l k s s t a a t»-ում 1874 թ. № 73. տես Ա. Սանինի ռուսերեն թարգմանությունը Բ. Սմիլնովի խմբագրությամբ, հրատ. Союз коммун северной области. 1919 թ., էջ 53):

ծումն ու սպանդանոցի խափանումն. այս մեր կողմից կատարված, ավարտված և լիովին ամեն կողմից այս կատարել, ավարտել կարող եր մի շարք առաջավոր յերկիրների հեղափոխությունը միայն: 2) Խորհրդային հասարակակարգի ստեղծումը, պրոլետարիատի դիկտատուրայի իրականացման ձևը: Համաշխարհային բեկումը կատարվել և: Բուրժուական-դեմոկրատական պարլամենտարիզմի դարաշրջանը վերջացել և: Սկսվել և համաշխարհային պատմության նոր գլուխը, պրոլետարական դիկտատուրայի դարաշրջանը: Միայն մի շարք յերկիրներ կարող են մշակել ու կատարելագործել-պրծնել խորհրդային կարգերն ու պրոլետարական դիկտատուրայի ամեն տեսակի ձևերը: Այս ասպարեզում դեռ շատ ու շատ բաներ կան մեղնում դեռ չավարտված: Անհերքելի կլինի այս չնկատել: Դեռ մենք շատ անգամ հարկ ենք ունենալու ավարտելու, վերակերտելու, սկզբից սկսելու: Արտադրող ուժերի ու կուլտուրայի զարգացման գործի յուրաքանչյուր աստիճանին, վոր մեզ կհաջողվի նվաճել՝ դիմելով դեպի առաջ, դեպի բարձր, պետք և ուղեկցի մեր խորհրդային սխառմի կատարելագործումն ու վերակերտումը, այնինչ տնտեսական ու կուլտուրական տեսակետից մենք շատ ցած ենք կանգնած: Հարկ և լինելու շատ բան վերակերտել, և սրա պատճառով «չիտթվելն» անհեթեթության գաղաթնական կետը կլինեք (յեթե չլինեք ավելի վատ, քան անհեթեթությունն և): 3) Սոցիալիստական կերտվածքի հիմքերի տրտեսական շինարարությունը: Այս ասպարեզում դեռ ամենադժվարը, ամենահիմնականը չի կատարված-վերջացրած: Այնինչ հենց այս և մեր իսկական գործը, ամենից իսկականը թե սկզբունքային տեսակետից, թե գործնական, թե ՌՍԲՖՀ տեսակետից այժմ և թե միջազգային տեսակետից:

Բանի վոր ամենադժվարը բանը չի կատարված-վերջացրած հիմնականում, հարկավոր և նրա վրա դարձնել ամբողջ ուշադրությունը: Յեվ այստեղ դժվարությունն անցման ձևի մեջ և:

«Բաղական չի լինել հեղափոխական ու սոցիալիզմի կամ կոմունիզմի կողմնակից ընդհանրապես», — գրում էլի յես 1918 թվի ապրիլին «Սորհրդային իշխանության հերթական խնդիրները» բրոշյուրիս մեջ^{*)} : — «Հարկավոր է յուրաքանչյուր մոմենտում դռնել կարողանալ շղթայի այն հատուկ ողակը, վորից պետք է կաշել բոլոր ուժերով, վորպեսզի ամբողջ շղթան մեր ձեռքում պահենք և ամրապես կանխապատրաստենք հետևյալ ողակին անցնելը, ընդվորում անցքերի պատմական շղթայի ողակների կարգը, նրանց ձևը, նրանց չարահարությունը, միմյանցից ունեցած տարբերությունն այնպես պարզ չեն և այնպես հասարակ չեն, ինչպես դարձել պատրաստած սովորական շղթայի մեջ» :

Ներկա մոմենտում գործունեյության այն ասպարեզում, վորի մասին խոսում ենք, այսպիսի մի ողակ է հանդիսանում ներքին առևտուրը կենդանացնելը, վորին զուգորդված է այս առևտրի պետական ուղիղ կարգավորումը (ուղղություն տալը) : Առևտուր — ահա անցքերի պատմական շղթայի, 1921—1922 թվականների մեր սոցիալիստական շինարարության անցումնային ձևերի այն «ողակը», «վորից պետք է բոլոր ուժերով կաշենք» մենք, պրոլետարական պետական իշխանությունը, մենք, ղեկավար կոմունիստական կուսակցությունը : Յեթե մենք այժմ բաղական ամուր բռնենք ու «կրպչենք» այս ողակից, մոտիկ ապագայում, անկասկած, մենք կտիրենք ամբողջ շղթային : Այսպես մենք չենք կարող ամբողջ շղթային տիրանալ, չենք կարող սոցիալիստական հասարակական-տնտեսական հարաբերությունների հիմքն ստեղծել :

Այս տարրերնակ է թվում : Կոմունիզմ և առևտուր ? : Մի խնդիր անչափ չկապակցվող, անհամապատասխան, հեռավոր բան է այս արդեն : Սակայն յեթե խորհրդածենք տնտեսագիտորեն, ապա մեկը մյուսից ավելի հեռու չի, քան կո-

մունիզմը մանր դյուղացիական, նահապետական հողագործությունից :

Յերբ մենք հաղթենք համաշխարհային մասշտաբով, յես կարծում եմ՝ աշխարհի միջանի ամենամեծ քաղաքների փողոցներում հանրային արտադրողներ կշինենք վոսկուց : Այս կլինի վոսկու ամենից «արդարացի» ու անխառն-դաստիարակչական գործածությունն այն սերունդների համար, վորոնք չեն մոռացել, թե ինչպես վոսկու համար տասը միլիոն մարդ ջարդեցին ու յերեսուն միլիոն մարդ հաշմանդամ արին — 1914—1918 թվականների ռուսապետական մեծ պատերազմում, այն պատերազմում, վոր մղվում եր լուծելու համար այն մեծ խնդիրը, թե վո՞ր հաշտությունն է ավելի վատթար, իրեստի՞նք թե վերսայլինք, և թե ի՞նչպես նույն վոսկու համար պատրաստվում են անկասկածորեն ջարդելու քան միլիոն մարդ և հաշմանդամ անելու վաթսու միլիոն մարդ այն պատերազմում, վոր կարող է լինել, թերևս, 1925—ի կամ 1928 թվի մոտերքը, թերևս Ճապոնիայի ու Ամերիկայի միջև, կամ Անգլիայի ու Սովետիկայի միջև, կամ վորևե պատերազմում :

Սակայն վորքան ել «արդարացի», վորքան ել ողտակար, վորքան ել մարդասիրական լինի վոսկու վերոհիշյալ գործադրությունը, այնուամենայնիվ մենք կասենք. մեկ-յերկու տասնամյակ ել դեռ պետք է աշխատել նույնպիսի լարումով ու նույնպիսի հաջողությամբ, ինչպես մենք աշխատեցինք 1917—1921 թվականներին, միայն շատ ավելի լայն առաքարեղում, վորպեսզի աշխատելով հասնենք այդ վիճակին : Իսկ առայժմ պետք է վոսկին պահել ՌՍՖՍՀ մեջ, վաճառել ամենի թանդ, նրանով ապրանքներ գնել ավելի եժան : Գայլերի հետ ապրողը պետք է գայլերի պես վորնա, իսկ բոլոր դայլերին բնաջնջելու համար, ինչպես վոր պահանջվում է խելքը դիվին մարդկային հասարակության մեջ, կհետևենք ուսական իմաստուն առածին, վոր ասում է. «Մի պարծենալովի գնալիս, այլ պարծեցիր կովից վերադառնալիս»... :

^{*)} Տես յերկերի XXII հատորը, ողւտ. հրատ. էջ 466: Խմբ. :

Առևտուրը միակ հնարավոր տնտեսական կապն է տասնյակ միլիոնավոր ամեր հողագործների ու խոշոր արդյունաբերութեան միջև, յեթե... յեթե այս հողագործների կողմից գոյութիւն չունէ ելեկտրալարերի ցանցով ոժտված հոյակապ, խոշոր մեքենային ինդուստրիա, մի ինդուստրիա, վորը թե իր տեխնիկական հզորութեամբ, թե իր կազմակերպական «վերնաշէնքերով» ու հարակից յերևութենքով ընդունակ լինէր մանր հողագործներին ավելի արագ և ավելի եժան մատակարարելու ավելի լավ արդյունքներ ու ավելի մեծ քանակութեամբ, քան առաջ: Համաշխարհային մասշտաբով այս «յեթե»-ն արդեն իրագործված է, այս պայմանն արդեն գոյութիւն ունի. սակայն յերկիրներից մեկը, այն էլ կապիտալիստական յերկիրների միջից ամենահետամնաց յերկիրը, վորը փորձեց միանգամից ու անմիջաբար իրացնել, կենսագործել, գործնականորեն հարթել արդյունաբերութեան նոր կապը հողագործութեան հետ, չհաղթահարեց այս խնդիրը «գորհներով կատարած հարձակումով» և այժմ պետք է այն խնդիրը հաղթահարի մի շարք դանդաղ, աստիճանական, գլուշ «պաշարողական» գործողութիւններով:

Պրոլետարական պետական իշխանութիւնը կարող է տիրել առևտրին, սրան ուղղութիւն տալ, դնել վորոշ շրջանակների մեջ: Փոքրիկ, մի շատ փոքրիկ որինակ. Դոնավազանում փոքրիկ, դեռ շատ փոքրիկ, բայց անկասկածելի տրնտեսական կենդանութիւն է սկսվել մասամբ խոշոր պետական հանքահորերում կատարվող աշխատանքի արտադրողականութեան բարձրացման շնորհիւ, մասամբ էլ մանր գյուղացիական հանքահորերը վարձակալութեամբ տալու շնորհիւ: Պրոլետարական պետական իշխանութիւնն, այսպիսով, ստանում է փոքրիկ (առաջավոր յերկիրների տեսակետից չնչին, աննշան, իսկ մեր աղքատութեան պայմաններում այնուամենայնիւ նկատելի) քանակութեամբ ավելադիր ածուխ 100 %-ի ինքնարժեքով, իսկ այս ածուխը վաճառում է

պետական առանձին հիմնարկներին 120 %-ով, մասնավոր անհատներին՝ 140 %-ով: (Փակագծի մեջ նկատեմ, վոր այս թիվերը յես վերցնում եմ միանգամայն քմածին նախ այն պատճառով, վոր ճիշտ թիվերը չգիտեմ, իսկ յերկրորդ՝ այն պատճառով, վոր յեթե յես իմանայի, այժմ յես դրանք չեյի ել հայտարարի): Այդ նման է նրան, վոր մենք, թեև ամենահամեստ չափերով, սկսում ենք տիրել արդյունաբերութեան ու հողագործութեան միջև կատարվող շրջանառութեանը, տիրել մեծաքանակ առևտրին, տիրել այն խնդրին, վորի նպատակն է կաշի գոյութիւն ունեցող մանր, հետամնաց արդյունաբերութիւնից, կամ խոշոր, բայց թուլացած, քայքայված արդյունաբերութիւնից, ավյալ տնտեսական պատվանդանի վրա հիմնվելով՝ կենդանացնել առևտուրը, դպալի դարձնել միջակ, չարքային դյուրացուն (իսկ սա մասսայի մարդ է, մասսայի ներկայացուցիչը, տարերքի կրողը) տնտեսական կենդանութիւնը, սրանից ոգտվել՝ խոշոր արդյունաբերութեան վերականգնման ամբելի սխառեմատիկ ու համառ, ամբելի լայնածավալ ու հաջողակ աշխատանք կատարելու համար:

Անձնատուր չլինենք «զգացմունքի սոցիալիզմի» իշխանութեանը, կամ հին ռուսական, կես աղայական, կիսագեղջիկական, նահապետական տրամադրութեանը, վորոնց հատուկ է անկշռադատ արհամարհանքը դեպի առևտուրը: Տնտեսապես-անցումնային բոլոր ու ամեն տեսակի ձևերից թույլատրելի յե ոգտվել և հարկավոր է ոգտվել կարողանալ, քանի վոր այս անհրաժեշտ է դյուրացիութեան կապը պրոլետարիատի հետ ամրապնդելու համար, քայքայված ու տանջված մի յերկրում ժողովրդական տնտեսութիւնն անհապաղ կենդանացնելու համար, արդյունաբերութեանը բարձրացնելու համար, հետագա ամբելի լայնածավալ ու խոր միջոցները, ինչպիսին է, որինակ, ելեկտրիֆիկացիան, գյուրացնելու համար:

Ռեֆորմները ու հեղափոխութեան առնչութեամբ վորոշակի ստուգելու և ուղիղ վորոշելու միայն մարքսիզմը, ընդ-վորում Մարքսը կարողացաւ այս առնչութեամբ տեսնել մի կողմից միայն, այն է՝ մի պարագայում, վորը նախորդում էր պրոլետարիատի շատ թե քիչ հաստատուն, շատ թե քիչ յերկարատեւ առաջին հաղթութեանը, թեկուզ մեկ յերկրում։ Այսպիսի պարագայում ուղիղ առնչութեան հիմքը հետե-յալն էր. ռեֆորմները պրոլետարիատի դասակարգային հե-ղափոխական կռիւի յերկրորդական արդշունքն են։ Ամբողջ կապիտալիստական աշխարհի համար այս առնչութեանը պրոլետարիատի հեղափոխական տակտիկայի պատմանդանն է հանդիսանում, այն այբուբենը, վոր աղավաղում և մթա-գնում են II Ինտերնացիոնալի վաճառված պարագլուխները և III² Ինտերնացիոնալի կիսապեղանոտ, կիսակոտրատվող ասպետները։ Պրոլետարիատի թեկուզ մեկ յերկրում տարած հաղթութեանից հետո մի ինչ-վոր նոր բան է ասպարեղ գա-լիս ռեֆորմները ու հեղափոխութեան առնչութեան մեջ։ Սկզբունքորեն բանը հենց նույնն է մնում, սակայն ըստ ձևի հանդես է դալիս մի փոփոխութեան, վոր Մարքսն անձամբ նախատեսել չէր կարող, բայց վոր կարելի չէ հասկանալ մարքսիզմի փելիսոփայութեան ու քաղաքականութեան հողի վրա կանգնելով միայն։ Ինչո՞ւ մենք կարողացանք ճիշտ կի-րատել Բրեստի նահանջը։ Վորովհետեւ մենք այնքան շատ ելինք առաջ դնացել, վոր նահանջելու տեղ ունեյինք։ Մի-ջանի շարաթվա մեջ, 1917 թվի հոկտեմբերի 25-ից մինչև Բրեստի հաշտութեանը, մենք այնպիսի դիսպուտայտ արա-դութեամբ կերտեցինք խորհրդային պետութեան, հեղափո-խական ճանապարհով դուրս յեկանք իմպերիալիստական պատերազմից, կատարեցինք, ավարտեցինք բուրժուական-դեմոկրատական հեղափոխութեանը, վոր նույնիսկ վիթխա-րի հետադարձ շարժումը (Բրեստի հաշտութեանը) այնուա-մենայնիվ մեր ձեռքում միանգամայն բավականաչափ դիրքեր

թողեց, վորով մենք հնարավորութեան ունեցանք «գաղարից» ոգովելու և հաղթականորեն առաջ խաղալու Կոլչակի, Դե-նիկինի, Յուդենիչի, Պիլսուդսկու, Վրանգելի դեմ։

Մինչև պրոլետարիատի հաղթութեանը ռեֆորմները դասակարգային հեղափոխական պայքարի կողմնակի ար-դշունքն են։ Հաղթութեանից հետո ռեֆորմները (միջադ-գային մասշտաբով հենց միեւնոյն «կողմնակի արդշունքը» լինելով) այն յերկրի համար, վորտեղ հաղթութեան է տար-ված, հանդիսանում են, բացի սրանից, անհրաժեշտ որինա-կան դադար այն դեպքերում, յերբ ուժերի մաքսիմալ լարու-մից հետո, պարզապէս հիշյալ ուժերը չեն բավականացնում այսինչ կամ այնինչ անցումը հեղափոխականորեն կատարե-լու համար։ Հաղթութեանը տալիս է «ուժերի» այնպիսի «պաշար», վոր մի բան դեռ մնում է, վորով հնարավոր է լինում դիմանալ նույնիսկ ստիպողական նահանջի ժամա-նակ, դիմանալ թե նյութական և թե բարոյական իմաստով։ Նյութական իմաստով դիմանալ՝ այս նշանակում է ուժերի բավականաչափ վերակշռութեան պահպանել, վոր թշնամին չկարողանա մեկ վերջնականորեն ջախջախել։ Բարոյական իմաստով դիմանալ՝ այս նշանակում է թույլ չտալ բարո-յալքման յենթարկելու իրեն, կաղմալուծելու իրեն, պահ-պանել դրութեան զգաստ զնահատութեանը, պահպանել հո-գու կայտառութեանն ու հաստատականութեանը, նահան-ջել թեկուզ և շատ հեռ, սակայն այն չափով, վորքան ան-հրաժեշտ է, նահանջել այնպէս, վորպետեղ ժամանակին դա-դարեցնես նահանջը և նորից հարձակման անցնես։

Մենք նահանջեցինք դեպի պետական կապիտալիզմը։ Սակայն մենք նահանջեցինք այն չափով, վորքան անհրա-ժեշտ էր։ Մենք այժմ նահանջում ենք դեպի առևտրի պե-տական կարգավորումը։ Բայց մենք կնահանջենք այն չա-փով, վորքան անհրաժեշտ է։ Արդեն նշաններ կան, վոր յե-րևում է այս նահանջի վերջը, յերևում է այս նահանջը վոր

շատ հեռավոր ապագայում կանգնեցնելու հնարավորությունը: Վորքան ավելի ղեկավարվում, վորքան ավելի համերաշխորեն, վորքան ավելի քիչ նախապաշարումներով կատարենք այս անհրաժեշտ նահանջը, այնքան ավելի շուտով կարելի չի այս նահանջը կանգնեցնել, այնքան ավելի հաստատ, արագ ու լայնածավալ կլինի այնուհետև մեր հաղթական առաջնադաշու թյունը:

5 նոյեմբերի, 1921 թ.

Տղաքվում և Յերկերի ուսու-
2-րդ հրատ. XXVII հատ. տեր-
աից, էջ 79—85.



Հայերեն քաղգմ. լիզվ. իմր. Մ. Ջ.

ՊԵՏԼՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Սրբազրեց' Ա.Տէր-Մկրտչյան

Պրովիա 7604 (բ)

Հրատ. 30

Պատվեր 2974

Տիրում 5000

Հանձնված է արտադրության 17 օկտեմբերի 1932 թ.

Ստորագրված է ապրիլի 20 հոկտեմբերի 1932 թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0172694

4472 15 4472

337
4080

Библиотека
Института
Востоковедения
и
Исламоведения
СССР

В. И. Ленин

О значении золота теперь и после полной победы
социализма

Издание ЦК КП (б) А
Партиздат, Эривань 1939